

թույլ կտա նրան հետ ստացած ֆինանսական միջոցները ներդնել համեմատաբար բարձր տոկոսադրույքով: Պարտատոմսերի այս տեսակը շատ է հանդիպում, օրինակ՝ Բրազիլիայում, որտեղ ընկերությունները թողարկում են հիմնականում «put» օպցիոնով պարտատոմսեր:

Միջազգային պրակտիկայում հայտնի են նաև մասնակցող պարտատոմսերը¹: Մասնակցության պարտատոմսերը իրենց սեփականատերերին իրավունք են տալիս ստանալու ոչ միայն երաշխավորված տոկոսները, այլ նաև նրանց վճարվում է հավելավճար՝ կախված թողարկողի ֆինանսական վիճակից թողարկման պայմաններով սահմանված կարգով: Այս պարտատոմսերի թողարկումը, փաստորեն, ներդրողին ապահովում է հաստատագրված եկամտով՝ դրա հետ մեկտեղ նրա մոտ լրացուցիչ հետաքրքրությունն առաջացնելով պարտատոմսերի ձեռքբերման նկատմամբ (լրացուցիչ եկամուտ ստանալու հնարավորություն):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, մեծ է կորպորատիվ արժեթղթերի՝ որպես ներդրումների ներգրավման ֆինանսական գործիքների դերը տնտեսության մեջ: Մի կողմից դրանք ազատ դրամական միջոցների ներդրման ճկուն գործիք են, մյուս կողմից՝ միջոցները տնտեսության տարբեր ոլորտներ ուղղելու և արտադրությունը զարգացնելու նպատակով մոբիլիզացման արդյունավետ եղանակ:

ԱՐԹՈՒՐ ՓԱՇԽՆՅԱԼ

*ՀՀ ԳԱՍ Մ. Զորանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հայաստանի ազգային տնտեսությունը անցյալ դարի վերջին մուտք գործեց արմատական վերափոխումների ժամանակահատված: Ներկայումս սկիզբ են առել երկրորդ սերնդի բարեփոխումները, որոնք միտված են բնակչության (այդ թվում՝ գյուղաբնակների) կյանքի որակի էական բարձրացմանը՝ նկատի ունենալով, առաջին հերթին, կենսապայմանների (սոցիալ-տնտեսական կայունության) կտրուկ բարելավումը:

Նախորդ (վարչաօրհանայական) տնտեսակարգի վերափոխման փուլում ինչպես Հայաստանի, այնպես էլ անցումային տնտեսության այլ երկրներում ի հայտ եկան էական անկումային գործընթացներ, ընդ որում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ նշված գործընթացներն առավել ընդգծված դրսևորվեցին Հայաստանի տնտեսությունում:

Յուրաքանչյուր պետության տնտեսական վերափոխումները բխում են երկրի առանձնահատկություններից, ուստի դրանց ուսումնասիրությունը և վերլուծությունը հնարավորություն են ընձեռում այս կամ այն բնագավառում առավել արդյունավետ քաղաքականության մշակման ու իրականացման համար: Նշվածը ամբողջությամբ վերաբերում է նաև հանրապետության գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրմանը: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ այդ ուղղությամբ գործնական քայլեր դեռևս չեն իրականացվել, ուստի նշված գործընթացը խոչընդոտող գործոնների բացահայտումը, ծառացած հիմնախնդիրների հանգուցալուծումն արդիական է և հրատապ, քանի որ գյուղատնտեսությունում

¹ Я. М. Миркин, С.В. Лосев, Б.Б. Рубцов и другие “Руководство по организации эмиссии и обращения корпоративных облигаций”, Москва 2004, стр.41-42.

ապահովագրական գործուն համակարգի ներդրումը ոլորտի զարգացման կարևորագույն մասնադրյալներից է: Հարցն այն է, որ ինչպես մախկին տնտեսակարգի պայմաններում, այնպես էլ հողի սեփականացման գործուն ի վեր, գյուղատնտեսությունում կուտակվել են բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք, գյուղատնտեսական ապահովագրության համակարգի բացակայության հետ մեկտեղ, խոչընդոտում են ոլորտի զարգացումը, պայմանավորում են վերջինիս խոցելիությունը և մրցունակության դեռևս ոչ բավարար մակարդակը: Մասնավորապես, դրանց շարքին են դասվում՝

- ագրարային բարեփոխումների խորացումը, շուկայական ենթակառուցվածքների զարգացումը և տնտեսավարման ձևերի կատարելագործումը,
- պարենային ապահովության մակարդակի բարձրացումը, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության անհրաժեշտ մակարդակի ապահովումը,
- տեղական արտադրության գյուղատնտեսական մթերքների մրցունակության բարձրացումը և, ըստ նպատակահարմարության, ներմուծվող պարենամթերքի՝ տեղական արտադրությամբ փոխարինումը,
- գյուղատնտեսական արտադրության գոտիական ռացիոնալ տեղաբաշխումն ու մասնագիտացումը,
- հողաբարելավման համալիր միջոցառումների իրականացումը,
- բուսաբուծության զարգացումը, ինչը, առաջին հերթին, պայմանավորված է ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրմամբ, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնմամբ, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացմամբ, սերմերի որակի հսկողության գործուն կառուցակարգերի կիրառմամբ, բույսերի պաշտպանությամբ և բույսերի կարանտին միջոցառումների իրականացմամբ,
- անասնաբուծության զարգացումը, որի համար, մասնավորապես, անհրաժեշտ է վերջինիս ենթաճյուղերի (տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, ձկնաբուծություն, մեղվապահություն, գազանաբուծություն) արդյունավետ զուգակցումը և ռացիոնալ տեղաբաշխման առկայությունը, տոհմային գործի բարելավման համալիր միջոցառումների իրականացումը, անասնաբուծական միջոցառումների արդյունավետության բարձրացումը, կերային բազայի բարելավումը, անասնաբուծական առևտրային կազմակերպություններին աջակցության ընդլայնումը, գյուղատնտեսական կենդանիների, հատկապես «կովկասյան գորշ» ցեղի գենետիկական բարձր հատկությունների պահպանումը,
- գյուղատնտեսության սպասարկող և սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը,
- ագրարային ոլորտի հարկային և վարկային համակարգի բարելավումը՝ հարկային արտոնությունների համակարգից սուբսիդավորման համակարգի անցման կառուցակարգերի կիրառման, գյուղատնտեսության վարկավորման կառուցակարգերի կատարելագործման և մատչելիության բարձրացման միջոցով,
- ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավումը¹:

Ագրարային ոլորտում իրականացվող քաղաքականության ուսումնասիրությունը կարևորվել է մեր կողմից այն պատճառով, որ ապահովագրությունը ոլորտի արդյունավետության բարձրացման հիմնական բաղադրիչներից մեկն է և պետք է դիտարկվի զարգացումը պայմանավորող (խոչընդոտող) այլ գործոնների հետ համատեղ, քանի որ դրանք փոխկապակցված են ու փոխապայմանավորված:

¹ ՀՀ կառավարության՝ 2006թ. նոյեմբերի 30-ի N 1826-Ն «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության վերանայված տարբերակը հաստատվելու մասին» որոշման հավելված 1, էջ 15,16:

Նշենք, որ ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությամբ նախանշված խնդիրների և դրանց լուծման քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում փաստացի ներառված չէ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրումը: Դրա հիմնական պատճառը, մեր կարծիքով, այն է, որ Հայաստանում դեռևս չեն իրականացվել գյուղատնտեսության վարման ռիսկերի գնահատման աշխատանքները, որն էլ, մեր պատկերացմամբ, ապահովագրական համակարգի ներդրումը խոչընդոտող հիմնական գործոններից մեկն է:

Ի դեպ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից դեռևս 2004 թվականին ներկայացված բյուջետային հայտում հիմնավորվել էր հանրապետության 870 համայնքում բնակլիմայական գործոնով պայմանավորված ռիսկերի գնահատման իրականացումը, սակայն այդ աշխատանքներն առ այսօր չեն կատարվել, ինչը սահմանափակում է հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունների գործունեության ծավալումը (2008թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում էր 9 ապահովագրական ընկերություն, որից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերալիցենզավորվել էր միայն 1-ը): Նշված ընկերությունները, ըստ մեր կողմից կատարված ուսումնասիրությունների, գյուղատնտեսության ապահովագրությամբ գրեթե չեն զբաղվում (գյուղատնտեսության ապահովագրությունը կազմում է ընկերությունների ապահովագրական պորտֆելների շուրջ 0.1%-ը), ուստի ակնհայտ է, որ այդ գործընթացը խոչընդոտող գործոնների հաղթահարման համար պահանջվում է պետական միջամտությունը մասնակի սուբսիդավորման և այլ եղանակներով: Մեր կարծիքով, գյուղատնտեսության ապահովագրությունը և այդ համակարգի ներդրումը խոչընդոտող գործոնները պետք է դիտարկվեն իրականացվող ագրարային բարեփոխումների համատեքստում՝ ելնելով ոլորտում ստեղծված ու կանխատեսվող իրավիճակից: Հասկանալի է, որ ագրարային քաղաքականությունը պետք է դիտարկվի երկրի տնտեսական համընդհանուր բարեփոխումների միասնականության ներքո: Այսպես, ըստ երկրորդ սերնդի բարեփոխումների, Հայաստանը հեռանկարում հավակնում է դառնալ զարգացած արդյունաբերական երկիր տեղեկատվական տեխնոլոգիաների, գիտելիքահենք (գիտատար), այլ ճյուղերի հետ մեկտեղ աստիճանաբար զարգացնելով նաև տեղական հումքի բազայի վրա սննդի արդյունաբերությունը՝ հաշվի առնելով վերջինիս մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում: Այդ հեռահար հիմնախնդրի լուծման նպատակով գյուղատնտեսության զարգացման տեսլականը հիմնված է տնտեսության շուկայական կողմնորոշման հետևողական խորացման և տնտեսության ագրարային հատվածի առանձնահատկություններով պայմանավորված քաղաքականության իրականացմանը՝ արդյունքում ապահովելով:

- գյուղացիական տնտեսությունների և առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների հիմքի վրա՝ բարձր մրցունակություն ունեցող, տնտեսության մյուս հատվածների հետ հորիզոնական կապերով կոոպերացված արտադրություն,

- երկրի պարենային անվտանգության շահերի և ագրոպարենային արտադրանքի արտաքին առևտրի հարաբերական առավելության սկզբունքների իրատեսական համադրումով՝ բնակչության կայուն պարենային ապահովում և ագրովերամշակող հատվածի պահանջարկի բավարարում գյուղատնտեսական հումքով,

- գյուղատնտեսությունում համախառն արտադրանքի աճի ապահովումը աշխատանքի արտադրողականության աճի հաշվին, գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակի կրճատումը,

- արտադրված գյուղատնտեսական հումքի զգալի մասի վերամշակումը՝ գյուղական համայնքներում ձևավորված փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման միջոցով,

- բուսաբուծության և անասնապահության ներճյուղային կառուցվածքի բարելավումը, բարձր ավելացված արժեք ապահովող գյուղմթերքի արտադրության բազայի և արտադրության ծավալների ավելացումը,

• գյուղատնտեսության ներուժի, հատկապես հողային և ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը,

• բնակչության պարենային ապահովության վիճակի կտրուկ բարելավումը, գյուղական աղքատության աստիճանական հաղթահարումը, տեղական արտադրության հաշվին պարենամթերքով ինքնաապահովվածության մակարդակի բարձրացումը¹:

Այսպիսով, կարելի է գալ այն եզրահանգման, որ պետության կողմից հաստատված գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության տեսլականի իրագործումն առաջիկայում պահանջելու է ապահովագրական գործուն համակարգի ներդրում: Հաշվի առնելով միջազգային փորձը և Հայաստանի գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունները, վերջինիս ներդրումը, մեր կարծիքով, հնարավոր է միայն պետության ֆինանսական միջոցների ներգրավմամբ, ինչպես նաև կազմակերպատնտեսական, օրենսդրական ու մի շարք այլ խնդիրների լուծման արդյունքում, քանի որ, ըստ կատարված ուսումնասիրությունների, գյուղատնտեսության ապահովագրությունը հանրապետությունում խոչընդոտվում է մի շարք գործոններով:

Կարելի է ենթադրել, որ այդ գործոնների առկայությունը այն հիմնական պատճառն է, որ կայուն զարգացման ռազմավարությամբ գյուղատնտեսության ապահովագրությունը ներառված չէ հանրապետությունում որդեգրված քաղաքականության հիմնական ուղղություններում, քանի որ այդ բնագավառում ծառացած խնդիրներին լուծում տալը բավականին ռեսուրսատար և ժամանակատար գործընթաց է (ռազմավարության գործողության ժամկետը նախատեսված է մինչև 2015թ.):

Ուստի, գտնում ենք, որ վերը նշվածի հետ մեկտեղ, ստորև ներկայացվող խոչընդոտող գործոնների համալիր բացահայտումը և դրանց աստիճանական վերացումը գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրման հիմնական նախապայմաններից է:

Հանրապետության գյուղատնտեսությունում ապահովագրական շուկայի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ գյուղացիական տնտեսությունների կողմից տվյալ ծառայության նկատմամբ պահանջարկը դեռևս մեծ չէ, ինչը բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնցից, մասնավորապես, կարելի է առանձնացնել գյուղմթերք արտադրողների վճարունակության ցածր մակարդակը:

Չնայած վերջին տարիներին արձանագրված որոշ դրական տեղաշարժերին՝ աշխատանքի արտադրողականությունը ճյուղում շարունակում է մնալ խիստ ցածր՝ հիմնականում օբյեկտիվ պատճառներով: Այդ կապակցությամբ նշենք, որ հողի սեփականաշնորհումից հետո գյուղացիական տնտեսությունների ընդամենը 4.7%-ի հողաբաժինն էր մեկ հողակտորով, 40%-ի հողաբաժինները 2 հողակտորով են, 22%-ի՝ 3, իսկ մնացած 33.3% տնտեսություններինը՝ 4-7 հողակտոր: Տնտեսությունների փոքր չափերի և մասնատվածության պայմաններում երկրի գյուղատնտեսության ինտենսիվացումը պահանջելու է բավականին տևական ժամանակահատված, որպեսզի գյուղացիական տնտեսությունների գերակշիռ մասն ունենա բարձր եկամուտներ և պատրաստակամ ու վճարունակ լինի ապահովագրական վճարներ կատարելու համար:

Հարաբերելով արտադրության կանխատեսումային ծավալները գյուղատնտեսությունում զբաղվածների կանխատեսվող ցուցանիշներին (հաշվի առնելով ապրանքների և ծառայությունների կանխատեսվող աճը)՝ կարելի է եզրահանգել, որ այլ հավասար պայմաններում տնտեսավարողների եկամուտները աստիճանաբար աճելու են: Մակայն յուրաքանչյուր տնտեսության հաշվով կենսամակարդակի կտրուկ աճն անիրատեսական է: Ուստի, գյուղացիական տնտեսությունների մեծամասնության ներկայիս և մոտ ապագայում կանխատեսվող վճարունակության մակարդակը նույնպես լուրջ խոչընդոտ է երկրում ապահովագրական

¹ ՀՀ կառավարության՝ 2006թ. նոյեմբերի 30-ի N 1826-Ն «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության վերանայված տարբերակը հաստատվելու մասին» որոշման հավելված 1, էջ 13, 14:

համակարգի ներդրման համար: Այդ խոչընդոտի վերացումը, մեր կարծիքով, կապահանջի ագրարային բարեփոխումների որոշակի ճշգրտում՝ նկատի ունենալով ոլորտի ինչպես ինտենսիվ, այնպես էլ էքստենսիվ զարգացման ներուժի առավել արդյունավետ օգտագործումը:

Մյուս խոչընդոտող գործոնը, մեր համոզմամբ, ապահովագրությունը կարգավորող օրենսդրության անկատարությունն է: Շուկայական տնտեսությանն անցման փուլում այն աստիճանաբար կատարելագործվում էր, և այդ գործընթացի խթանման առումով առանձնակի կարևորվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ. ապրիլի 9-ին ընդունված «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը (22-ը մայիսի, 2007թ., ՀՕ-177-Ն), որի հիմնական նպատակներն են. «...ապահովադիրների և ապահովագրված անձանց և շահառուների իրավունքների պաշտպանությունը, ապահովագրական համակարգի կայուն զարգացումը, հուսալիությունը և բնականոն գործունեության ապահովումը, ինչպես նաև ապահովագրական գործունեություն իրականացնողների միջև ազատ տնտեսական մրցակցության համար հավասար պայմանների ստեղծումը»¹:

Ներկայումս ՀՀ-ում գործող իրավական ակտերը, ըստ էության, համապատասխանում են միջազգային պրակտիկայում ընդունված հիմնական սկզբունքներին և չափանիշներին: Ընդ որում այդ ուղղությամբ առանձնահատուկ դերակատարություն ունի ՀՀ Կենտրոնական բանկը, որը, ստանձնելով ապահովագրական բնագավառի խնամարկման դերը, կարճ ժամանակահատվածում ապահովեց զգալի առաջընթաց: Մակայն բազմաթիվ դրական տեղաշարժերի հետ մեկտեղ, որպես օրենսդրության անկատարություն, կարելի է նշել այն փաստը, որ օրենսդրությունը դեռևս բավարար չափով չի արտացոլում գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի կայացմանն ուղղված մոտեցումները, չի նախատեսում ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված անհրաժեշտ պայմանների, նախադրյալների ստեղծումը, կառուցակարգերի մշակումը և ներդրումը, ինչը, մեր գնահատմամբ, զգալիորեն խոչընդոտում է գյուղատնտեսության ապահովագրության ձևավորումն ու զարգացումը:

Միջազգային առաջավոր փորձի, ինչպես նաև հայրենական գիտնականների աշխատությունների և ՀՀ ագրարային հատվածում ապահովագրության համակարգի ներդրման գործընթացի սեփական դիտարկումների արդյունքում եկել ենք այն համոզման, որ պետության աջակցությունն այդ համակարգի արդյունավետության հիմնական նախապայմաններից մեկն է: Այդ մոտեցումը պահանջում է օրենսդրորեն սահմանել գյուղատնտեսության ապահովագրության 3 գլխավոր կողմերի՝ գյուղատնտեսական մթերք արտադրողների (վերամշակողների), ապահովագրող ընկերությունների և պետության (ի դեմս լիազորված մարմինների) միջև փոխհամագործակցության ձևերը, աջակցության ուղղությունները, չափերը և այլն:

Նպատակահարմար ենք գտնում, որ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում կատարվեն համապատասխան լրացումներ, որոնք վերաբերում են պետության մասնակցությանը, պարտադիր ապահովագրության դեպքերին (ձևերին, պայմաններին), կոոպերատիվների կողմից ապահովագրական գործունեություն իրականացնելու իրավունքին, ինչպես նաև ագրարային հատվածի առանձնահատկություններից բխող այլ լրացումներ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով վերը նշված օրենքի ծավալը (97 էջ) և գյուղատնտեսության ապահովագրության բազմազանությունը, որպես այլընտրանքային տարբերակ, առաջարկում ենք «Գյուղատնտեսության ապահովագրության մասին» կամ «Գյուղատնտեսությունում ռիսկերի կառավարման և ապահովագրության մասին» ՀՀ օրենքների մշակումը:

Բացի այդ, անհրաժեշտ է նաև նրանց կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական և գերատեսչական (հատկապես ՀՀ Կենտրոնական բանկի) իրավական նորմատիվ ակտերի ընդունումը՝ բնագավառը կանոնակարգող իրավական դաշտում ամկա բացերը լրացնելու նպատակով: Մասնավորապես խոսքը վերաբերում է ինստիտուցիոնալ կառույցների ձևավոր-

¹ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2007, էջ 1:

մանն ու ամրապնդմանը, ռիսկերի վերաապահովագրության ընդլայնմանը, ագրարային ապահովագրության բնագավառում աշխատանքների համակարգմանն ու կազմակերպմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը: Հասկանալի է, որ օրենսդրության կատարելագործումը բարդ է ժամանակատար գործընթաց է, սակայն, հաշվի առնելով նշված գործոնի անմիջական ազդեցությունը գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության բարձրացման հարցում, գտնում ենք, որ այդ խնդրին լուծում պետք է տրվի հնարավորինս սեղմ ժամկետում: Ընդ որում, գտնում ենք, որ գյուղատնտեսության (առավելապես բուսաբուծության) ապահովագրության նկատմամբ պետք է մշակվի և իրագործվի տարբերակված քաղաքականություն (հարկային, վարկային և այլն)՝ նկատի ունենալով այդ ոլորտի խոցելիությունը, դերն ու նշանակությունը, երկրի տնտեսության մրցունակության բարձրացման անհրաժեշտությունը:

Հաջորդ խոչընդոտող գործոնը, ըստ մեր կողմից կատարված ուսումնասիրությունների, հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունների կողմից պաշարկվող ապահովագրական պրոդուկտի սահմանափակումներն են, դրանց որոշակի անվստահությունը գյուղապահովագրության նկատմամբ, այդ բնագավառում որոշակի փորձի բացակայությունը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորաստեղծ ապահովագրական ընկերությունները հայտնվեցին շուկայական հարաբերություններով կարգավորվող միջավայրում և չունեին բավարար փորձ, հմտություններ, գիտելիքներ՝ նոր տնտեսակարգի պայմաններում գործելու համար: Այսօր էլ որակյալ մասնագետների պահանջարկը ապահովագրական շուկայում մնում է չբավարարված, քանի որ ապահովագրությունն ինքնին բարդ գործընթաց է և պահանջում է խորը գիտելիքների իմացություն և փորձ: Բացի այդ, գյուղատնտեսության ապահովագրությունը պետք է դիտարկվի այլ ռիսկերի ապահովագրության համատեքստում, ինչը հույժ կարևոր է ապահովագրական ընկերությունների կայացման, դրանց արդյունավետ փոխհամագործակցության տեսանկյունից: Դա է պատճառը, որ հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունների պորտֆելները, ըստ մեր ուսումնասիրությունների, դեռևս խիստ սահմանափակ են: Այսինքն՝ գյուղատնտեսության ապահովագրության կայացումը խոչընդոտվում է նաև հանրապետությունում ապահովագրական գործի թերզարգացմամբ: Կատարված ուսումնասիրություններից բացահայտվել է նաև ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող սահմանափակ ծառայությունների հետ մեկտեղ, ակներև գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների կողմից որոշակի անվստահությունը նշված ընկերությունների նկատմամբ, ինչը, մեր կարծիքով, նույնպես զգալիորեն խոչընդոտում է ապահովագրական գործուն համակարգի ներդրումը Հայաստանում:

Ամփոփելով նշենք, որ վերը թվարկած խոչընդոտների աստիճանական վերացումը, դրանց նկատմամբ համալիր մոտեցումը, այդ ուղղությամբ համարժեք քաղաքականության իրականացումը, հաշվի առնելով միջազգային փորձը, գյուղատնտեսության ապահովագրության գործուն համակարգի ներդրման գրավականն են: